

ՔՆՆՈՒԹԻՒՆ ՄԱՎԱԿԱՆ ԿԱՂԱՆԿԱՏՈՒՅՑՈՒ

●

Դ.

Անգնենք Զեւանչէրի պատմութեան որ բըռնում է նոյն երկորդ գրքի մէջ - Լի գլուխները: Հ. Հացոմի կածում է որ Կաղանկատուացին սկսել է եւ վերջացրել իր գործը 828 թուին: Բայց «Զեւանչէրի փառքը արձարծել է պատմագրի հոգին», եւ նա վերստին լծուել է աշխատանքի երեսնամեայ գաղտարից յետոյ, 670 թուականին, զրելու հերոսի քաջապրծութիւնները: Եւ զարմանալի է որ «ոգեւորուած պատմագրից վայր է դրել գրիչը, երբ գեռ հերոսը կենամի էր, եւ աւարտել իր գովզը, երկար կենաք մատթելով փառուարի իշխանին: Ի՞նչն էր արգելել տանիլ հերօսին մինչեւ գերեզման Սըրգօք քատմագրի մահը, Հ. Հայունին այս մասին չէ մտածել:

Այս աւելիք քան տարօրինակ կարծիքը ջրելու անգրեպ միջոցն է պատմական ժնութիւնը, որին կ'ինթարկինք պատմագրի հաղորդած տեղեւութիւնները հերոս Զեւանչէրի «փառքի» վերաբերեալ:

ՄՌ էր Զեւանչէրը: Հասուածի սկզբը, ժէ գլխի մէջ, պատմագրիը յայտարարում է որ գտել է նրա ծագումը «յստոյց եւ ի բուն պատմագրաց»: Պատմում է որ Խոսրով Բ. զաւարձանալով կոտորեց իր Բնդոյ եւ Վաստաքնիներին եւ բոլոր ազգականներին, մօտ 60 հոդի: Միայն մի հոգի, ոմն Միհրան, «առեալ երջ իբրեւ երեսուն հազար», փախաւ Աղուանք, անցնելու Խաղարց աշխարհը: Պարտաւ հասած՝ ստացաւ թագաւորից ներում եւ թոյլտութիւն հաստատուելու Աղուանք, փոխանակ դնալու թշնամի Խաղարների մօտ:

Միհրան գնաց Գարդման, շինեց Միհրաւան քաղաքը, դաւով սպանեց տեղական տասներկու իշխաններին եւ տիրացաւ երկրին: Մեռաւ թողնելով մի որդիք՝ Արմայէլ սրո որդին էր Վարդ, իսկ Վարդի որդին՝ Վարդան Քաջ, շինող Գարդմանայ բերդի: Քաջն Վարդան ճաշի կանչեց Եռանշահիկ իշխաններին, սպանեց թոլորին, մօտ 60 հոգի, խնայեց միայն Զարմիհը Եռանշահիկն որ իր փեսան էր: Այս Վարդանի թունորդին էր Զեւանչէր: -

Միհրան	Քաջն Վարդան
Արմայէլ	Վարդ
Վարդ	Վարազման, Շուշիկ, Վարադ-Գրիգոր
Քաջն	Վարդազ Փերոս, Զեւ-ՆԱՆՇԷՐԻ, Յեղուառ-Խոսրով, Վարազման:

Խոսրով գահակալեց 590 թուին: Զեւանչէր ծնած աէտք է ինի մօտաւորապէս, ինչպէս կը տեսնենք, 615: Մեր պատմագրից 590-615, ուրեմն 25 տարուան մէջ, հաշում է եօթն սերունդ, Միհրանից մինչեւ իր թունորդու թոռնորդին Զեւանչէր: Կատարեալ անհեթիւթութիւն:

Առաջին գրքում իթ զլ. կայ Աղուէնի ժողովի արձանագրութիւնն, ուր մասնակցողների թուում զանուում է նաև Գարդմանի տէր՝ Քաջն Վարդան: Ժողովը գումարուած է Վաշագան թագաւորի համանուվ: իսկ սա զահ էր բարձրացել, ինչպէս պատմագրին է յայտնում, Վաղարշ թագաւորի օրով (484-488): Ասել է թէ, 590 թուին Աղուանք ոտ կոխած Միհրան Պարսիկի թունորդին Քաջն Վարդան ապրում

Եր գրեթէ մի դար յառաջ քան իր նախահայրը : Անելքեւակայիշի՝ անհեթեթութիւն :

Եկւոր տոնմբ գրաւում է երկիրը ոչչացնելով նախկին տէրերին որոնք սերում էին Առանից եւ կոչում Հայկակեանց աղդ նունահիկ (իմա՞ Առանշահիկ) : Տէշելով այս պարագան, պատմադիրն աւելցնում է՝ «զոր վերագոյն գրեցակ ի մատնիս, անհարկելով Ա. գրեթի ժե գումարու ուր բուած են Հայկակեանց սերունդի տասն թագաւորները» : Հետուարար Կասկած չի կարող լինել որ Միկրանի պատմութիւնը պատկանաւմ է Կազմակատաւցու գրքին, այն հեղինակի որ գոյն է Ա. գրեթը :

Արդ հնարաւոր է որ այս անհեթեթ պատմութեան հեղինակն լինի ժամանակակից Միհրանի : Խելեր կարելու բա՞ն է որ 628ին ապրոյ մի հեղինակ այսքան խելար վերաբերում ունենայ իր ժամանակակից նորեկ առհման ժամանակաւոց կամաց առաջնական առաջնական առաջնական իններին : Ովագրաս է նաև որ ննթաղրեակ ժամանակակից պատմագիրը պատմագիրը պէտք է ունեցել զեմելու «սոտոյ եւ բուն» պատմագիրներին մեղ հաղորդելու հակատրամարանական մի առաջնական :

Իրաւունք ունինք հետեւցնելու որ պատմագիրը ժամանակակից թի, եւ չի գրել ի գործք ո՞չ 628 եւ ո՞չ 670ին : Միայն դարերով հեռու կանգնած գրչին ներելի է մի այդպիսի անգիտակից վերաբերում գէս ի անցեալը . մի միհակ հաւաքորդ որ ընդօրինակելի է ձեռքն ընկած նիթեթիւը առանց քննութեան եւ քննելու ընդունակութեան :

ԺԸ գլխի մէջ խօսքը արարական արշաւանքների ժամանի է : Յազկերս թագաւորին օգնութեան են վազում հպատակ աշխարհների աէրերը : Վարագ-Գրիգոր, Զեւանչէրի հայրը, եւս պարարատ է իր նպաստը երեկու, որպէս ծընունք ձեռնունք անդամական առհման պատմութիւնի նախահօր՝ Արտաշէր Պապականի սերնդի : Հեղինակն ուրեմն նոյն է որ պատմեց մեղ Միհրանան աւանդութիւնը :

Վարագ-Գրիգոր աւելի յարմար է համարում դրէնի իր երկրորդ որդուն՝ Զեւանչէրի : «իրուս եւ սիդաճեմ, չծնազագեղ ունելով տիպ» : Երեք հաղար զօրքով Զեւանչէր գնում է ներկայանում Ռուսում զօրգալիքն «ան քան իր գիշաւանի պատմութիւնը կամ դորդիւնը է» :

Վիշափան Միհնեաց եւ զսպարապէտն Հայոց : Եւ ընդունւամ «իրրեւ զեղայր կամ զորդի» եւ զըղճակի ամենեցուն :

Թոստոմ բուոր ոյժերի գլուխն անցած մեկնում է Յազկերտի մօտ Տիգրոն : Մանուկ Զեւանչէրին ներկայացնում թագաւորին որ ձեռքը զիմին գնելով գոյէց եւ կոչէց սպարապէտ Աղուանից :

Զօրքն անցած Դկղաթ (Տիգրիս) դետը, հասաւ Կեհկաւաս գաւառ եւ բանակից «քայն-կոյս մեռան շրոյ» : Թեթև ընդհարումից յետոյ, Մեհեկան ամսին, Քրիստոսի ծննդեան օրը, Ռուսամ 30 հազար հեծեալ եւ 10 հազար հետեւակ զօրքով ճակատեց Հազարու որդուց դէմ որ «եկեալ ի Կատանէ» բազմաթիւ հեծեալ եւ 20 հազար հետեւակ զօրքով նախայարձակ եղաւ Պարսից վերայ :

Աղուանից սպարապէտը երկու հակառակորդ սպանեց, բայց սոտաց երեք վէրք եւ իր չինքնէր շրոյ լից, եւ արինեածաղիք ամցաւ զետը եւ տեսնելով որ զօրքը պարտում է շտապից արքունի գորուը : Յազկերտ հրամայեց «տալ նմա ապարանս եւ արքունի թշկաց կալ առ նմա» : Երբ ողլացաւ՝ մտաւ թագաւորի մօտ, առ ձեռք ըրեց Զեւանչէրի գիմին եւ գովզն արեց բորցի առաջ եւ տուաւ նրան «զօրավարական նմանակ եւ փող, երկու նիզակ ոսկի, երկու փահան ոսկեթանեակ, որ նրա առաջ միշտ ըրդնեցնեն, այլ եւ բարձր զասելով բոլորից, կապէց նրա մէջքին շօտսի ոսկի ընդէլուզեալ մարգարոտի, սուսեր ոսկեսարայն, ապարանջանս բարկացն, պասկ ցանկալի ի գլուխ, ոսկեսարեակ զանկապան մարդարտով եւ զումարտով նոյնունակ չուրջ զպարանցաւն . ազուցին նմա արջմաթաք սոտոս չորիւք դրօշակօք եւ դրազս մնելոյ մետաքսառէջս եւ ոսկեթեզան փարտազով» : Բապաւորը չնորհեց նաև «գիւղաստանեար եւ գետու ձկանց» :

Զեւանչէր գրաւում է Խողապատ զօրգալի ուշագրութիւնն երբ քաջ միջամտութեամբ մերջ է զնում Ատրպատականի եւ Մայի զօրգալուն միջն ի միջն անդամական առհման պատման պատման գալու կամ դորդիւնը է Արտաշէրի չծնազագեղ ունելով տիպ» : Երեք հաղար զօրքով Զեւանչէր գնում է ներկայանում Ռուսական պատմութիւնի ներկայան երեք հաղարով յետ է մղում թշնա-

մուն գետի այն կողմ եւ թոյլ չէ տալիս Դկղաթ գետն անցնելու զամփսա վեց», մինչեւ որ Յաղ-կերս թագաւորի փախցնում են Դատասակերտ եւ ամսեղից Բեկղար: Արաբների հետապնդում են, Զեւանչը քաջալթեամբ կուռամ է եւ թըշ-նամու դլուիները կորած՝ բերում գուռում է թագաւորի առաջ: Պարսիկները յալթում են գիտաւոր ճակասում: Եւ Զեւանչը եօթն տարի կուռելոց յետոյ, տասն եւ մի գմնակ վէրս յանձն տոեալ գալիս է Ասրուտատական: Պար-սիկ զրավարը առաջարկում է իր դուռարը այնքան հռչակուած Զեւանչըրին, բայց առ մեր-ժում է «անօրինաց առնուն կիս եւ վերա-դառնում իր հօր մօս Աղուանք: Այս առթիւ կիմ է ծագում իր եւ պարսիկ զօրավացի մէջ, յալթանակում է Զեւանչըր:

Յաղկերտի 20րդ տարին կործանուում է Պարսիկ պետութիւնը, Հազարացոց տիրապե-տութեան երեսում եւ մի տարիին եւ Զեւանչըրի տասնեւհինգ ամ սպարապետութեան (ԺԹ. ԳԼ.):

Զտենք պատմական հատիկներն այս վիպա-կան որուներից: Ռուսում եւ Ռոռոխազաս (եւ ոչ Խոռազաս) անունները յայտնի են Սերէոսի պատմութիւնից: Խոստոմ, Աստրատականի իշ-խան, զնաց Արաբների զէմ Յազկերտի հրամա-նով: Նրա հետ էին Մուրեղ Մամկոննեան երեք հազար եւ Սիրենա Գրիգոր իշանը Հազար յարդով: Ճակուտամարտ տեղի ունեցաւ, ըստ Սերէոսի, Հերթիճան գիշտի մօտ: Պարսիկ զօր-քը պարտուց եւ զօրավարը սպանուեց, զու-ուեցին նաեւ: Մուշեղ եւ Գրիգոր: Յոյն եւ ա-րար աղբէրները կոչում են այս ճակատը Կա-դսիսայի ճակատ: Կաղեսիս (Kadesiya զիւլ է այժմեան Կովֆա քաղաքի մօս եւ Կա-դսիսայի ճարեւամ է Հերա գեւլը, որտեղից հետեցնելու է որ Հերթիճան նոյնն է ինչ որ Հերա եւ որ կոիւը տեղի է ունեցել երկու գիւ-տերի սահմանում:

Կաղեսիսայի յաջողութիւնից յետոյ Արա-ները հուտեցին Տիգրոնի վերայ եւ առան վե-ցածսեայ պաշարումից յետոյ: Նաւանջող պար-սիկ ոյժիքը մի երկորդ ընդհարում ունեցաւ Ճակիա տեղամաս հետապնդող Արաբների հետ: Վճուական ճակատը խմբուեց նեստենդի մօտ

որ որոշեց ընդմիշտ Սասանեան պետութեան բախտը:

Տարաբախտարար այս երեք զիսաւոր մար-տերի Խամանակը ճշգիւ յայտնի չէ: Տարածայ-նութիւնները գալիք են հին մատենագիրներից, եւ նոր պատմաբանները դժուարանում են հաշ-տեցնել հակասական տեղեկութիւնները: Հա-ւանօրէն, Կաղեսիսայի կոիւը վերաբրում է 637 թուին, Տիգրոնի պաշարումը եւ Զալիլայի ճակատը եւս նոյն տարին, իսկ նեստենդի պարտութիւնը 642 թ. (1):

- 1) Արաբական Ակայութեամբ, կադեսիայի կոիւը տեղի ունեցաւ Դամասկոսի գրաւումից մի ամիս յետոյ: Դամասկոսի գրաւումը հետու-ւց նարմուկի ճակատին, որի համար տակալի Մասուդի (կր. Bawdier de Meynard, IV., 224) երեք տարերին գիտէ, Հիջրի 14, 15 եւ անգամ 16: Մենք գիրապատմ ենի 15 Հիջրի, ահա ին-չու Թէոփան (էջ 518) պատմում է 635 տար-ուան տակ որ Վահան (Յկանենի որ սա Հայ էր եւ ոչ Պարսիկ, ինչպէս կրկեամ են զիմանիան-ները կոյր հետեւութեամբ միմեաց) եւ Թէո-դոր Սիլելլայր ընթարում ունեցաւ Արաբների հետ եւ պարտաւցին Յուլիսի 23, Երեքշաքրի օրը, եւ նոյն տարին Ֆիշ յետոյ յազրաւեցին նարմուկի մօտ: Թէոփանի 635 տարին մխան է, փոխանակ 636ի, որպիսի նույն միմիայն 636ին է որ Յուլիսի 23ը ընկեամ է Երեքշաքրի օր: Ահա մի հաստառակ կուռան: Հետեւարք նարմու-կի կոիւը եւս նոյն 636 թուին էր: Տարարի (Zotemberg, III., դւ. 29) վկայում է որ նար-մուկի կոիւն եղաւ շաբար օր, 28 Զաւարա ա-միս Հիջրի 13: Տարերիւը մխան է, բայց օրն ու ամսարիւը նիշդ: Արաբրեւ 636 թուին 28 Զաւ-արա Օգոստոսի 10 եւ շաբար օր (635ին նոյն ամսարիւը = 21 Օց., որ էր կիւրակի եւ 634 Սեպտեմբեր 2 որ էր ուրբար): Նարմուկից յետոյ ըստ նոյն Տարարի (զլ. 33) Արաբները զնացին Դամասկոսի վերայ եւ առան վեց (բայ-այլոց երկու) ամիս պաշարելուց յետոյ, հետե-ւական 637 թ. Փետրուարի 10 (կամ 636 Հոկտ-ուեմբեր 10): Դամասկոսից օգնական օրը զըր-կեցին Կաղեսիսայի զօրքը տեղ հասաւ Դամասկո-սի առուումից մի ամիս յետոյ, ուրեմն Մարտի

Այս կոիների մասին Կազմնկատուացին ցանցաւ եւ զիփոթ ծանօթութիւն ունի: Սէրէռսից դիմէք որ Պարսից զօրավարը Խոստում էր եւ Դրան զինակից էին Հայոց սպարագիտը՝ Մուշեղ եւ Սիւնեաց իշխանը՝ Գրիգոր: Ձեւանչէր չէ յիշուած, բայց Աղուանից պատմալիքը կ'ուզէ որ նա էլ մասնակից լինի եւ անդամ աւելի կանուխ գնացած Խոստումի մօտ քան իշխանները: Պարարատ է հնարիւ նրա համար քաջութեան տեսարաններ: Մերէուս պատմում է որ Արարանները պաշարել էին Տիգրոն, երբ վերայ համա Խոստում, եւ Արարանները ստիպուած նահանջեցին անցնելով Տիգրիսի միւս ափի: Խոստում հետանութեց: Արարանները գնացին Ներքին, Կայսերին անցան նաև Եփրատ եւ բանակիցին արեւմտան ափին Կատեսիալի մօտ: Կուրս սկսուեց եւ Խոստում, Մուշեղ եւ Գրիգոր ընկան պատերազմի գաշտում:

Կազմնկատուացու տեղեկութեամբ, Խոստում եւ Ձեւանչէր անցան Դեղաթ, հասած Վէհկաւատ գտաւու եւ բանակիցին «յայնկոյս մեռեալն ջորյ»: Մննդեան տօնին ճակասուցին ընդդեմ Հապարացւոց որ «եկեալ ի Կատշանէ նախանդ կատար Յնթագրութիւնում է թէ Կատեսիալը գորքի դէմ, որով Յնթագրութիւնում է թէ Կատեսիալի ճակատը Յնթագրութիւնում է եղէ:

12, 637 (Կամ Նոյեմբեր 10, 636):

Տարարիի ասելով Կապեսիա անկառ Մուհամետ ամսին (Հիջրի 14 սլով է): Արդ 637 Քսէին Մուհամետ սկսում է Փետր. 2 եւ վերջանաւ Մարտ 4, որ միանգամայն հաստատում է Մարտ 12 Քստականը: Տարարիութիւնը չնշին է եւ հասկանալի:

Կապեսիայի յաղբօրինից յետոյ զօրքը յարձակուեց մայրաքաղաքի, Տիգրոնի վերայ, եւ հետապնդեց պարսիկ հանահնջող զօրքը եւ բանակ զարկեց Զարուղ Կոյուած տեղում (Բաղդադի հիւսիս Դիալա գետի վերայ): Տարարի վկայում է (զլ. 49) որ վնասական բախումը կայցաւ վեց ամիսց յետոյ, երբ Պարսիկները պարտուած ֆախան դէպի Հալուան, Հիջրի 16 Զուլֆայա ամիս՝ Նոյեմբ. 23-Ինկու. 23: Զուլֆայա ամիս՝ Նոյեմբ. 23-Ինկու. 23: Վերջին մեծ հականի Նեհամեդի տարիքին աւելի հաստատ է: Սերէոս (էջ 112) գնաւմ է Կատանադի առաջին եւ Ցաղկեթափ 10րդ տարիթ = 642:

Խայտարձակ կերան: Պարսիկները պարտուեցին եւ Ձեւանչէր ստացաւ «երկու վէրք», իր ձին՝ ՀՀորս վէրքը, եւ փութաց Յաղկերս Թաղամարի մօտ, որ վարձատրեց նորան մեծամեծ, զդիթէ առասպելական պատիւներով:

Կարելի էր ընդունիլ, որ «մեւեալ ջուր» ասելով պատմալիքն հասկանում է Եփրատի ձահճուանները եւ ոչ Մեռեալ Մով, եւ որ Կատշան (=Կատշան) ասորական հնչիւն է Կաղեսիալի եւ ոչ թէ Պարսկաստանի՝ Կատշան կամ Գարցան զաւանն է (1) (Ճամաւանդ էթէ որիւէ չիմ լինէր կարդայու՝ Կաշայէ որպէս ուղղական եւ ոչ բացառական): Սակայն այս բոլորը կը լինեն լոկ ճիգեր պաշտպանելու մէր պատմագրի վարկը: Յունուարի 6 որպէս կոսուի օր Հետաքրքրական ցուցում է, բայց արժէքը նսեմանում է նրանով որ Խոստում ճակատած համարում է «ի՛ Կատշանէ եկեալ» զօրքի դէմ, որով Յնթագրութիւն է թէ Կատեսիալի ճակատը Յնթագրութիւնում է անդամ կ եղէ:

Հաղին կարիք կայ նկատելու որ Ձեւանչէրին շառայած ընծանները վիպական պաճոււանք են զորքի պատմական ստուգութիւնից:

Խոռոխաղատի մասին եւս այլ ասելիք չունի քան ինչ գտնէ Սէրէոսից: Սա ասում է որ Խոստումի մահից յետոյ «մնացորդք, զօրացն Պարսիկ յինորպատակն գումարեաց» ընտրեցին Խոյսազատ, որ շատակեց զնալ Տիգրոն փըրկելու թագաւորին, բնակեցներին, նաև պետական գանձը: Սակայն Արարանները Խոռոչեցին մայրաքաղաք եւ հալածեցին պարսիկ զօրագարին:

Կաղանկատուացին այլափոխում է դէպքը Ձեւանչէրին մի նոր եւ պատուաոր զէր վերապահելու նսպատակով: Որպէս թէ Արարատական երկու պարսիկ զօրամար գժառուեցին եւ Ձեւանչէր յաջորդց խոռոշութեան վերջ տալ: Խոռոխաղատ գոնչ առաւ հետոյ Ձեւանչէրին եւ զնայ Տիգրոնի վերայ որ պաշտուած էր թըշ-

1) Խորենացու Աշխարհագրութիւն, Կուտաշան (էջ 40) եւ Գաղցան (էջ 42). Կատշէր կոչուած ժողովորդի անունէն հաւաօրէն այժմ նաև Կաշան:

նամիներէն (1): Ձեւանչէր խոյացաւ երեք հազար մաղդով պաշարողների վերայ եւ զանեց նրանց Տիգրիսի միւս ափի, թոյլ չտուաւ նորէն զետև անցնել եւ յարձակուել քաղաքի վերա: Ժինչեւ որ Յաղկեց վախչէր Դաստակերտ եւ Բեկդալ:

Կաղեսիայի կոռուց յետոյ զինուորական խորհուրդ կարացաւ Տիգրոնում որի հետեւանքով Յագկերտ հեռացաւ հոյուան, խոկ զօրքերը քաջուեցին դէպի հրախս եւ Զարոււա փորձեցին կասել թշնամու յառաջխաղացութիւնը: Հետեւապէս Տիգրոնի պաշտպանութիւնը եւ այն էլ Ձեւանչէրի օգնութեամբ չի հաստատուած եւ թւում է թէ արձականք է Խոստոմի եւ իշխանների վերեւ յիշած դէպին: Դաստակերտ եւ Բեկդալ աղերեր յիշասակութիւնը ուշագրաւ է, բայց երաշնիք չէ պատմուածի սոուութութեանն: Թէփանից (էջ 492-499) յայտնի է որ Տիգրոնից հրախամ կայսի մի շարք գառակերտներ, այսինքն արքայական դղեակներ, որոնց թւում թէփան յիշում է Dastagerd և Beklali, (Դաստակերտ յատուկ անոն է, ուրեմն պէտք է գրել զիշատառով եւ ոչ դաստակերտ, ինչպէս տպագիրն ունի) եւ Բեկդալ: Դաստակերտը Խոսովիք սիրելի նրանոցն էր: Մի գուշակութեան համաձայն Տիգրոն աղետաբեր էր նրա համար, ուսաի արքայից արքան խուսափում էր Տիգրոնից եւ ապրում էր Դաստակերտ: Հերակլ կայսր 627-ի արշաւանքին մտաւ Բեկդալ եւ Դաստակերտ: Ճեղ պալատներ էին Հոյսակապ պարտէղներով, լի ամէն տեսակ կենանիներով: Փղից ժինչեւ թութակ: Դեկտեմբեր 25 Դաստակերտ էր կայսրը, լուր առաւ որ Խոսով վախնել է Տիգրոն եւ այստեղից Սելեւկիս: Այս երկու քաղաքները գտնուում էին Տիգրիսի ձախ եւ աջ ափերին դէմ առ դէմ, ուստի եւ Արարտները

1) Ժամանակը մենամ է անօրոշ՝ բնագիրը պատարաւած լիմերավ-ճեռագիրն ունի «յայրն ամսոց Ցաղկերտի», իրասարակիչը ուղղել է «յայրերարդ ամի», այսինքն 640: Երէ սրբագրութիւնն ընդունելի է, պատմագիրը սխալ է: Տիգրոնի պաշարումը եղաւ 637ին, Կաղեսիայի հակատից ամենիջապէս յետոյ:

անուանում են Մարտային («զոյդ քաղաք»): Թէսփան ասում է որ Սելեւկիայի պարսկերէն անունն է Gouedeser, որ է Աէրէսոսի եւ Կա-ղանկասուացու Վէհ-Արտաչիր (լաւ է կարդալ Bouedeser կամ լու եւս Bourdeser = Beh-Ardasir): Խոսրով հաւաքել էր իր վերջին ոյժերը եւ զրկել Արրա գետի (որ Տուրքնա=Դիարայի մի ճիւղն է Հաւանօրէն) կամուրջները քարել եւ շթղնել Հերակլին անցնիլ գետը: Հերակլ կողոպտեց Դաստակերտի եւ Բեկդալի հարստութիւնները, փշացրեց կեղանանցները եւ յառաջացաւ գէպի ի Տիգրոն: Տեսնելով որ Արրայ գետի կամուրջները քանզուած են եւ գետն անցնելու հնար չկայ, յես դարձաւ դէպի Շիհարզուր:

Արդ մեզ թւում է որ Կաղանկասուացին գիտէ Դաստակերտ եւ Բեկդալ Հերակլի պատմութիւնից, թերեւս յիշուած են եղել մի կերպ Վիրոյի յիշասակարանում: Մեր պատմադիրը օգտուել է այդ տեղեկութիւնից եւ յերիբել մի նոր տեսարակ ի փառս հերոս Ձեւանչէրի: Ստորեւ կը բերենք եւ մի ուրիշ կարեւոր կէտ առնուած Հերակլի կեանքից եւ վերագրած Կոստանդին: Այս պարագան է որ թելաղրում է մեզ Դաստակերտ-Բեկդալի նման բացատրութիւնը:

Ձեւանչէր կոռուց եօթն տարի, ստացաւ տաննեմէկ վլըք եւ եկաւ Ասորպատական եւ ապա Աղուսաք: Ասել է թէ վերադառնաւ (637+7=) 644 թուին: Գուցէ պէտք է կարդալ (փոխ. ե՞) տարի, ուրեմն մինչեւ 642, այսինքն Նեւաւենդի վճռական ճակատը, ուրից յետոյ պարսիկ ոյժերը քաջուեցին վե Ձեւանչէրին ալլ բան չէր մնում քան վերադառնալ իր Հայրենիք:

Լուրջ չէ այն պատճառը որ Հարկադրում է Ձեւանչէրին բաժնեւիլ Խոսիազատից: Իրրեւ թէ սա առաջարկում է իր քրոջ Ձեւանչէրին որ մերժում է չկամենալով «զոյդ յանօրինացն անուու կին»: Լուրջ չենք համարում այս պարագան, որովհետեւ հետապայումն նոյն Ձեւանչէրին չէր յօժարեց աննել կիութեան աւելի անօրէնին՝ Հնաց իշխանի գուստարը:

Պարսիկ իշխանը վիրաւորուած՝ զօրք է դրում «ապստամբ» Ձեւանչէրի դէմ ուն Դել-

մնաղդի (ոչ Գելմառզգի) զօրավարի հրամատարութեան ներքոյ: Ձեւանչէր յաղթում է եւ կողապուտով վերագառնում պատերազմի դաշտից: Դարձեալ Պարսիկները դալիս են, մըսնում Պերող քաղաքը, այսինքն Պերողապատ կամ Պարտաւ եւ գերում են Ձեւանչէրի մօրը եւ եղբօրը: Այս անգամ կոիւը տեղի է ունենում կապիճան (Կամքէճան) գաւառում որ կուրքի ձափ ափին է, մօտ Վրաց սահմաններին: Պատմագիրը լի ուղում խոստվանել որ թշնամին հալածել էր Աղուանից հերոսին մինչեւ Կամքէճան: Ձեւանչէր վէրք է ստանում, ապաստանում Վրաց Ալորներսէն իշխանի մօտ եւ օգնութիւն ստանալով վերադառնում է Ուտի գաւառը ուր գտնում էր Պերողապատ եւ կոտորում Պարսիկներին: Եակաչէն գաւառում, արդի Գանձակի շրջան, նորէն ջարդ է տալիս թշնամուն: Միւս ջարդերի մասին անտեղի է ասելց, ուրեմն աւելորդ է համարում պատմել: Վրաց վշխանը եւ Հայոց նախարարները խորհում էին նրան փեսայացնել, բայց Ձեւանչէր գերազառում է առնել Սիւնեաց իշխանի դուստը Ալորիճան տոհմէն:

Պարսից զօրավարը դիմում է Սիւնեաց իշխանի միջնորդութեան եւ հաշտում Ձեւանչէրի հետ, կնքելով սէր եւ խաղաղութիւն :

Ձեւանչէր յետ է ստանում իր գերուած մօրն ու եղբօրը:

Աղուանից իշխանը տեսնելով որ Պարսից պետութիւնը քայլացյւում է եւ պարսիկ իշխանները ձգտում են անկախութեան, ինքն եւս խորհում է «ացքայական շուք» տալ իր իշխանութեան: Պարսից զօրավարութիւն իշեթ է նայում Ձեւանչէրի այս ձգտումի վերայ, եւ ձերբակալում է նենգօրէն նորա հօրը: Ձեւանչէր յարձակուում է խիզախօրէն Պարսից վերայ Պերողակատ քաղաքում, յաղթում եւ աղաստում իր հօրը:

Յաղկերտի քսաներորդ տարին Պարսից պետութիւնը կործանուում է. Հազարացւոց տիրապետութեան երեսուն եւ մի տարին էր եւ Ձեւանչէրի սպարապետութեան տասնեւհինգ:

Այսուհետեւ Տաճիկները սպասառակուում են Հիւմասիյին եւ արեւելեան կորմերը: Ձեւանչէր անցնում է կետը (Կուր) եւ պատերազմում, «ոի զիւր զհայրն ի նոցանէ Խւա Թափեսցէ», բայց հայրը «գնայր կամաւորաբար ի թշնամին». Ձեւանչէր համաձայն է Հայոց զօրավարի հետ անցնելու կարսեր կողմը (Բ. ԺԹ):

(Շար.)

Ն. ԱՐՈՂԻՑ